# ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 24 Նոյեմբերի 1894 Հինգշաբթի, 24 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 200

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկ։
բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներո Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատի



**1895**-ԻՆ
(ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
ԿԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
# ՆՈՐ-ԴԱՐ
ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ
Թիֆլիսում

Ս ր հ ր ա տ ա ր ա կ ո ւ մ նոյն դիրքով եւ ծրագրով ամեն օր, բացի կիրակի եւ տօներին հետեւող օրերից։
(Տարեւայ ընթացքում ,,Նոր-Դար''-ը լոյս կըտեսնի առնուազն 220—225 անգամ)

«ՆՈՐ-ԴԱՐ» Ը ՍՏԱՆՈՒՄ Է ԵՒ ՍԵՊՀԱԿԱՆ ՀՈՒԱԳԻՐՆԵՐ

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում՝ 5 կոպ։

ԵՒՐՈՊԱՅի, ԹԻՒՐՔԻԱՅի և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՅի բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլար։

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում ինչպէս «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Պուշկինսկայա փողոցում, Սկուեըի դիմաց։

Օտար քաղաքներից բաժանորդ գրւողները դիմում են խմբագրութեանը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Ծանօթութիւն.—Առաջիկայ 1895 թ. համար «Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւնը բացուած է։ Առաջիկայ տարուայ համար նոր բաժանորդ գրւողը բաժանորդագինը ուղարկած օրից կարող է ստանալ «Նոր-Դար»-ի լոյս տեսնող համարները չրէ։


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա ռ ա ջ Ն ո ր դ ո դ.— Թրքահայաստանի մասին։

Ր ո ն ե կ ո ն.— Հրաւէր Անգլիացիներ Լորդ Կիմբերլէյի պատասխանը։ Լորդ Կիմբերլէյին տուած խնդրագրի ազդեցութիւնը։ Ռուսաց Թերթերը Հայաստանի դէպքերի մասին։ Ս. Էջմիածնից։ Կովկասի կառավարչապետի մեռելը Պետերբուրգում։ Դ կարչական նոր գործիք։ Մոզդոկից։ Զալալ Օղլուց։ Ախալքալաքից։

Հայաստանում կատարուած անգլիական հրապարակագրութիւնները և Բ. Դուռը։

Թուրքերի բարբարոսութիւնները և Պետերբուրգի Թուրքաց դեսպանը։

Գիտական շարժում։

Թ ղ թ ա կ ց ու թ ի ւ ն ն ե ր.—Նամակ Թիւրքեայից Կ. Պոլիս—Մի նոր հալածանք։

Ք ա ղ ա ք ա կ ա ն.— Ջինջ-Ճալոնական պատերազմը։ Ֆրանսիա։

Հ ե ռ ա գ ր ն ե ր.—

Խ ա ռ ն լ ո ւ ր ե ր.— Նէֆքարական մարդիկ։

Բ ա ն ա ս ե ր ա կ ա ն.—Հովիւ Զատիկ սէրը։

Տ ե ղ ե կ ա տ ո ւ.—

Ց ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։

## ՔՐՈՆԻԿՈՆ

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Լոնդոնի «Հայկական միութիւնը արտաքին գործերի մինիստրին էր գիմել Թրքահայաստանի դրութեան առթիւ։ Այժմ անգլիական լրագրներն, ինչպէս հաղորդում է «Րուսկ. Վէդ.»-ը յայտնում են լորդ Կիմբերլէյի պատասխանը։ Ցարգելի լորդը յայտնում է «Հայկական միութեան», որ սուլթանը որոշել է մի յանձնաժողով ուղարկել Հայաստան, որ պէտք է հայերի գանգատը քննի և թէ Պոլսի բրիտանական դեսպանն ամեն ինչ կանի, որպէս զի այդ քննութիւնն անաչառ լինի։

—

«Agence Balcanique»-ից քաղելով «Րուսկ. Վէդ.» հաղորդում է, որ Թիւրք կառավարչական շրջաններում վատ ազդեցութիւն է ունեցել Լոնդոնի «Հայկական միութեան»՝ արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբերլէյին տուած խնդրագիրը։ Թիւրք բարձր պաշտօնեաները գտնում են, որ Անգլիայի արտաքին գործերի մինիստրութիւնը իրաւունք չունի հայկական գործերին միջամտել, որ Թիւրքիան Հնդիւ կատարում է Բերլինի դաշնագրի պահանջները, որ Սասուն, Մուշ և դրանց շրջակայքում Թիւրքերը հայերին չեն կոտորել, այլ կարգն են միայն վերականգնել։

—

Մոսկուայից մեզ գրում են, որ Հայաստանում կատարուած վերջին դէպքերի առթիւ ռուսաց մի քանի հրչանաւոր Թերթերում չուտով քննադատական յօդուածներ լոյս կըտեսնեն։

—

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ Նոյեմբ'երի 21 են, երկուշաբթի օրը, մեզ հեռագրեցին.

—«Վ.Հ.Կ. Կաթողիկոսը բարեհաճել է յետաձգել Իր՝ Թիֆլիս ուղևորութիւնն անորոշ ժամանակով» *)։

—

Կովկասի կառավարչապետ գեն.-ադ. Ս. Ա. Շերեմետևը, մայրաքաղաքի Թերթերի ասելով, Պետերբուրգում մնալու է դարձեալ երկու շաբաթ, որովհետև այդ ժամանակամիջոցում պետական խորհրդին ծրագիր պէտք է առաջարկի Կովկասի կառավարութեան վերաբերեալ։

—

Վենետայում հրատարակուող «Technische Rundschau» Թերթի խմբագիր Րուդոլֆ Շվարցը ունենալով մեկնողի ժամանակ «արուեստական գոբելենների» բիւրո, խմբագրութեանս ուղղած մի նամակով խնդրում է մեր ընթերցողներին հաղորդել, որ ինքը հրնարած է մի նկարչական գործ, որը բոլորովին նոր լինելով իւր տեսակի մէջ, նոյն իսկ շատ նուազ պատրաստականութիւն ունեցող նկարիչներին տալիս է մեծ դիւրութիւններ այդ արուեստով պարապելու։

Պ. Շվարցի ասածին նայելով այդ տեսակ մի գործ մինչև օրս հրևան եկած չէ, և դա հաստատապէս թէ՛ տնային, թէ՛ ուսումնարանական և թէ՛ մասնաւոր պարապմունքների համար ամեն յարմարութիւններ ներկայացնում է։

—

ՄՈԶԴՈԿԻՑ.— Տեղիս հարուստ վաճառականներից մէկը, պ. Ուլուխանեանն, այս օրերս մի խնդիրքով ս. Էջմիածնումն էր գտնւում։ Վեհափառ Հայրիկը լսել ու կատարել է նրա խնդիրը։ Խնդրատուն լուսինեան ստանալով յանկարծ է Վեհ. Հայրիկին աջահամբոյր տալ, սակայն Վեհ. Հայրիկը բայէ ի բաց մերժել է և առաջարկել է Մոզդոկի օրիորդաց դպրոցում երկու որդեգրուհի պահել, հոգալ նրանց բոլոր պէտքերը, վերջն էլ իւր հաշուով ամուսնացնել, ապա թէ ազատուել իւր պարտաւորութիւնից։ Պ. Ուլուխանեանը սիրով ընդունել է Հայրիկի այս հայրախնամ առաջարկութիւնն և ստորագրութեան Թուղթ է տուել։

—

ԶԱԼԱԼ ՕՂԼՈՒՑ. — Շատ անգամ է խօսուել է մեռելի համար տրուած հոգեհացը (քէչէլը) վերցնելու մասին և այդ նպատակով ծախսուած փողը յատկացնելու օրէնք բարի գործի։ Նոյն իսկ Թեմիս սրբազան առաջնորդն իւր շրջաբերականով արգարացի յորդոր է կարդում քահանաներին՝ համոզել ժողովրդականներին հոգեհացի համար արած դուրս ծախսերը վերջացնել և բարի գործերի յատկացնել այդ ծախսուելիք գումարը։

Ուրախութեամբ յայտնում ենք, որ տեղւոյս քահանայ հ. Մկրտիչ Տ. Ցա. կոբեանցն իւր ժողովրդին առաջին օրինակն է տալիս, նուիրելով յիսուն րուբլի հայոց դպրոցին հանգուցեալ իւր հօրեղբօր կնոջ յիշատակին և տեղի ընդունուած «քէչէխի»։ Մերոնց հոգեհաց անունով կազմած ճոխ սեղանները մեծ ծախսերի մէջ են ձգում մեռելատէրերին. համեստօրէն խորհուրդ ենք տալիս հետևել երեից ծերխատէր քահանայի օրինակին։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ. — Ներկայումս Ախալքալաքը ներկայացնում է ցնծի մէջ ընկնած մի քաղաք։ Մեծ յոյս ունենք, որ վերջապէս նոր ընտրուած դեպուտատները քաղաքի փողոցների սալայատակելու մասին կըմտածեն, բայց զուր. կարծես մեր քաղաքի ճակատին գրուած լինէր ցեխի սեզոն ունենալ անպատճառ։

—Վերջապէս քաղաքս էլ ունենալու է իւր մէջ խմելու ջուր։ Արդէն վճռուած է քաղաքիս մօտ երեք վերստ հեռաւորութեամբ գտնուող Ապլաթի ջուրը բերել քաղաք։ Թէև այդ մասին բաւական մեծ գումար է ծախսուելու, բայց գոնէ չուտով կազատուենք վեզրոն մի կոպ. ջուր լմելու Թանգութիւնից։

*) Սոյն հեռագիրն երկուշաբթի երեկոյեան յանձնուած էր ապարան, բայց լոյս չտեսաւ։ Խմբ.

## ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՆԳԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ Բ. ԴՈՒՌԸ

—

Այն քաղաքների տեղեկութիւնների առթիւ, որ լոյս են տեսնում եւրոպական և մանաւանդ անգլիական լրագրերների մէջ Հայաստանում Թուրքերի կատարած բարբարոսութիւնների մասին, «Հաւասի Դոբճակալութիւնը» կ. Պոլսից հետևեալ Թղթակցութիւնն է ստացել։

«Բ. Դուռն իւր ցաւ է յայտնում այն դիւրահաւատութեան վերաբերմամբ, որով եւրոպական լրագրները շտապեցին արտատպել անգլիական մի քանի լրագիրների Թղթակիցների փանտասիական պատմութիւնները։ Անգլիական լրագրների առաջ բերած զոհերի Թուերը հրէշաւոր կերպով չափազանցուած են. իսկապէս ասած, ոչ մի անգթութիւն չի եղել»։

«Սասունում եղած ապստամբութիւնը վերաբերում է օգոստոսի երկրորդ կիսին. հաստատապէս յայտնի է, որ հայերը շատ կարելի է որ քիւրդերից վիրաւորուած լինելով, յարձակուել են վերջիններիս վրայ և սպանել են քրսանեվհինգ հոգի։ Այսպիսի ինքնակամ վարմունքը չէր կարող անպատիժ մնալ, և ահա Թուրք կառավարութիւնը չորրորդ զօրաբանակի հրամանատար Զեկի փաշային յանձնարարեց, որ կարգը վերականգնէ և պատժէ խռովարարներին։ Զօրքերը գնացին անկարգութեան տեղը օգոստոսի վերջերին. հայերի բնակավայրը շրջապատուեց տասնեւերկու գումարտակ կանոնաւոր հետևակ զօրքով և քրդական հեծեալ երկու գնդով։ Հայերը, տեսնելով, որ զօրքերը մօտենում են, Միհրան անունով մի օտարահպատակ հայի առաջնորդութեամբ դուրս եկան նրանց դէմ։ Մի եւրոպացի Հանապազորդի ասելով, որ ներկայ է եղել հայերի և զօրքերի միջև եղած ընդհարմանը, հայերից սպանուել են մօտ երեք հարիւր հոգի։

«Օգոստոսի 31-ին ապստամբութիւնը վերջնականապէս Հնշուած էր և կարգը վերականգնած։

«Եւրոպական լրագրների մէջ հաղորդուած էր նմանապէս այն մասին, Թէ Կ. Պոլսի անգլիական դեսպանութիւնը, զայրացած լինելով Թուրքերի՝ հայերի վրայ գործած գազանութիւնների վրայ, շտապել է առանձին յանձնաժողով ուղարկել անկարգութիւնների տեղը։ Այդ լուրը բոլորովին անՀիմ է։ Անգլիական կառավարութիւնը յանձնարարել է իւր Էրզրումի հիւպատոսին, որ կարելոյն չափ Հիմ տեղեկութիւններ հաւաքէ այն մասին, Թէ իսկապէս ինչ է պատահել Փոքր Ասիայի հայ բնակիչների մէջ. այդ կարգադրութեամբ էլ սահմանափակուում է Անգլիայի մասնակցութիւնը ներկայ անկարգութիւնների գործում»։

«Գրաժդանին» լրագիրն ամբողջապէս առաջ բերելով այս Թղթակցութիւնը, հրաւացել կերպով նկատում է հետևեալը։

«Պէտք է արգեօք ասել, որ այս բոլոր Թղթակցութիւնը կազմուած է այն Թուրք վարչական անձերի Թելադրութեամբ, որոնք շահ ունին ծածկելու իսկութիւնը և հայերին մեղաւոր հանդիսս բերելու կարգը խանգարելու գործում»։

## ԹՈՒՐՔԵՐԻ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԹՈՒՐՔԱՑ ԴԵՍՊԱՆԸ

—

Պետերբուրգի Թուրքաց դեսպանութիւնը «հերքումներ» է որ հրատարակում է ռուսաց մամուլի մէջ Հայաստանում կատարուած անգթութիւնների մասին։ Այս օրերս առաջ բերինք այդ դեսպանութեան մի «հերքումը», որ նա ուղղել էր «Նովոստի» լրագրին, և որը ըստ արժանւոյն գնահատուեցաւ։ Այս անգամ էլ՝ «Նով. Վր.» լրագրի մէջ է յիշեալ «հերքման» նման մի քան հրատարակել. Տալուորիկում տեղի ունեցած կոտորածի առթիւ.

«Մուշի շրջակայքում տասը գիւղերի հայերը, աւազակ(?) ոմն Համբարձումի գրգռմամբ, աւազակամբիր էին կազմել, հրացաններով, դանակներով, կացիններով և այլ զէնքերով զինուած։ Յուլիսի վերջերն նրանք յարձակում գործեցին գիւղական ցեղի վրայ, սպանեցին այդ ցեղին պատկանող մի քանի հոգի և կողոպտեցին նրանց բոլոր կայքը. ապա դիմեցին դէպի բեքիրների և բադիկանցւոց ցեղերը՝ նրանց վրայ յարձակում գործելու։ Աւազակամբերը ողջ-ողջ այրեցին մի ոմն հաջի՝ բեքիրների ցեղի աւագներից մէկին. Լմբը-ազայի քեռորդուն, որից յետոյ նրանք ծայրայեղ բռնաբարութիւնների ենթարկեցին Կուլի-Թուզան գիւղի մահմեդական կանանց և քրստոնեական տանջանքները տալուց յետոյ ըսպանեցին նրանց։ Այս դեռ բոլորը չէ. ոգևորուած վիզը Թոկ ձգելով, նրանց քարշ էին տալիս գետնի վրայ, իսկ մի քանիսի աչքերը հանեցին ու ականջները կտրեցին. Զբաւականանալով այդ բաներով, աւազակները ճանապարհին այրեցին մի քանի գիւղեր.

«Սակայն կայսերական վարչական անձերի ձեռք ուած վճռական միջոցների չնորհիւ, այդ աւազակախմբերը ցրուեցան, և նրանց պարագլուխ Համբարձումը, նմանապէս և նրա օգնականներն ու Ղզըլ-Քիլիսայի Մկրտիչ քահանան, որը քննութեան ժամանակ գրգռողներից մէկն է ճանաչուած, ձերբակալուած են և դատի մատնուած։ Կանայք ու երեխաները, որոնց աւազակները տարել էին լեռները, վերադարձուած են իրենց բնակութեան տեղերը, կարգը և խաղաղութիւն վերականգնած է»։

## ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

—

Անցեալներում, մի քանի յօդուած նուիրելով այս խնդրին, ասել էինք, որ միայն վաճառականները չեն, որ ուշադրութեան չեն դարձնում գործակատարների ապահովութեան խնդրին, այլ նոյն իսկ գործակատարների ստուար մեծամասնութիւնը շատ անտարբեր է դէպի այդ կարևոր խնդիրը (տես «Նոր-Դար» № 94)։

Գործակատարների մեծամասնութիւնը չէ մտածում իւր ապագայի

# ԴՈՒՍԻՈՒՀԻՆ

ՀՈՎՀ. ՍՈՒՍԱՆԵՑԻ*)

—

Ջաւթե ժամը կաւր, ճօտեցաւ Ա-
ռաւօտ կանուխ, ժամուն զանգափուն ցրեցի ընկերներս, ու ինքս ալ տուն դարձայ եւ ննջասենեակիս մէջ մտայ ժամ մը ետքը։

Ելլուս պէս ուրիշ ոչինչ, միայն ան մարդը, զոր ես ճանչնալ կուզէի, ինծի համար կը գոյանար։ Ես ոչ միայն ուզեցի տեսնել զայն, այլ եւ ինքս ալ ուզեցի ինծի համար ստեղծել անոր պատկերը։ Ես ինծի համար ստեղծեցի մարդ մը, որ ամէն ինչ կրնար ընել, ամէն ինչ կրնար ըսել, ամէն ինչ կրնար ընդունիլ, ամէն ինչ կրնար ներել։ Ես ինծի համար ստեղծեցի մարդ մը, որ ինծի համար ամէն ինչ էր, ամէն ինչ կրնար ըլլալ։ Ես ինծի համար ստեղծեցի մարդ մը, որ ինծի համար ոչինչ էր, ոչ մէկ բան կրնար ըլլալ։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
(«Նոր-Դար»-ի կողքին)
ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

բաստիճան զինուորականները և ՀՀ զօրքը անընդունակ են պատերազմի գործերի վերաբերմամբ.

Արձուր նաւահանգստի գրաւումը պատերազմական տեսակէտից մեծամեծ դիւրութիւններ է տալիս Ճապոնացիներին և դիւրացնում նրանց նախագծած աշխատանքը դէպի Պէկին, Իսկ չինացիք կորցնելով այդ նաւահանգիստը, որ իբր դիրքով ու ամրութիւններով մինչև անգամ անառիկ լինելու համբաւն էր վայելում, ստիպուած են բոլորովին սահմանափակել իրենց նաւատորմիղի շարժումները ու կեդրոնանալ միայն Վէյ-Հայ-Վէյում, որ Արձուրից յետոյ նրանց մնակ յոյսն է կազմում. Ըստ ամենայն հաւանականութեան այդ պարտութիւնը մեծ խրտուռ և յուսահատութիւն առաջ կբերի Պէկինի քաղաքացիների շրջաններում և վերջնականապէս կըհամոզէ նրանց իրենց անպատրաստականութեանը մէջ Ճապոնեայի դէմ պատերազմելու նկատմամբ.

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԱՂՖՏՐԿԱՆ ՄԱՐԴԻԿ

—

Ցիսուեական Թուականներում ամեն բժիշկ Պինո պատմում էր մի նորատի այրկայ մասին, Հոնորինն Սեգէն, որ ծառայում էր մի կար անող կնոջ մօտ և քաղաքում և ելէքտրական այժ էր պարունակում իւր մէջ.

Մի անգամ,—այս բանը պատահել է 1857 Յուլի դեկտեմբերի սկզբին,—երբ Հոնորինը կար անելիս է եղել իւր ուսուցչուհու մօտ, նրանց առաջ գրտնուած սեղանը յանկարծ շարժուում է առանց որ և է նկատելի պատճառի. Այդ երևոյթից վախեցած՝ երկուսն էլ վեր են Թռչում և փախչում. Բայց սեղանը ընկնում է Հոնորինի հետևից և մի քանի քայլ սպեղով, շուռ է գալիս ու վայր ընկնում. Նոյնն է պատահում և սենեակում գտնուած միւս առարկաներին,—ամոռներին, մահճակալներին, պահարաններին,—հենց որ Հոնորինը դիպչում է եղել նրանց. Այդ օտարոտի երևոյթները կրկնուում էին ամեն օր երկու ամսուայ ընթացքում. Վերջապէս բժիշկ Պինոն գնում է յատկապէս ուսումնասիրելու համար Հոնորինի այդ խորհրդաւոր այժը.

Փորձի ժամանակ Հոնորինը նստում է մի աթոռի վրայ, իսկ մի ուրիշ աթոռ դնում է իւր մօտ, այնպէս որ շրջագծեսի վերջը դիպչում էր նրան. Կէս ժամ սպասելուց յետոյ, նրա շրջագծեսը յանկարծ սկսում է և սկսում շարժուել ձայներիններ արձակելով. Այդ րոպէից սկսած աթոռը կոյը գործիք է դառնում Հոնորինի ձեռքին, որի կամքով նա պտտւում էր, բարձրանում էր երկու ոտի վրայ և այլն. Այդ խորհրդաւոր երևոյթը կրկնուում էր ամեն անգամ, հենց որ Հոնորինի շրջագծեսի վերջերը դիպչում էին աթոռին. Պէտք է նկատել, որ երկու ժամ տևող այս փորձի ժամանակ Հոնորինի ձեռքերն ու ոտներն անշարժ էին մնում, ուստի չէր կարելի կարծել, որ նա խաբում էր Պինոն փորձերից յետոյ ոչինչ չկարողացաւ լսնանալ, Թէև համոզուած էր, որ այդ անսովոր երևոյթները պէտք է վերագրել ելէքտրականութեանը. Երկու ամսից բոլոր օտարոտի երևոյթներն սկսեցին Թուլանալ, յետոյ բոլորովին չքացան, և Հոնորինը սովորական աղջիկ դարձաւ.

1880 Թուին ամերիկական մի ԹերԹում գրուեցաւ մի ուրիշ աղջկայ մասին (Քանադայից), որ ամբողջապէս ելէքտրականութիւն էր ներկայացնում. Ամեն ոք, ով դիպչում էր նրան, կամ նրա հետ ձեռք կռխում էր ջրով լի բաժակը, խիստ ցնցում էր զգում. Այդ աղջիկը զարմանալի ձգողական ոյժ ունէր. երբ ուզում էր կարիլ, ասեղը ծակում էր նրա ձեռքը. դանակը որ ձեռքն էր առնում, միատոը կպչում էր ձեռքին, ինչպէս մագնիսի. Սենեակ մտնելիս, այնտեղ եղողները բոլորն էլ մի տեսակ Հնչուած դրութեան մէջ էին զգում իրենց. ոմանք քնում էին, մնուսներն, ընդհակառակը, աննորմոր գրգիռ էին զգում. Քնած երեխաները արթնանում էին, երբ նա մօտենում էր, բայց բաւական էր լինում, որ նա ձեռքով մի վարագուրական շարժում գործէր—և երեխաները նորից քնում էին. Մինչև անգամ կենդանիները եղել էին նրա ազդեցութեանը. շներն ու կատուները ամբողջ ժամերով անշարժ մնում էին նրա մօտ, կարծես սառած լինէին. Թէ ինչ եղաւ յետոյ այդ աղջիկը—յայտնի չէ.

Ցիշեալ դէպքերից կարելի է եզրակացնել, որ ելէքտրական մարդիկ իրական երևոյթ են նիւթական աշխարհում. Բայց ինչից է առաջ գալիս այդ. Որտեղ է իսկապէս այդ մարդկանց ելէքտրականութեան գործարանը. Դրանք դեռ ևս չուսումնասիրած խնդիրներ են. Ուսումնասիրելը դեռ ևս քիչ է պարապել այդ հետաքրքիր երևոյթով, որպէս զի կարողանար քիչ-շատ վճռական եզրակացութեան գալ. Պէտք է միայն, ելէքտրական ձկների ներկայացրած նմանութեան երևոյթների հիման վրայ, կարծել, որ ելէքտրական մարդկանց մարմնի մէջ էլ կայ որ և է գործարան, որ յատկապէս յարմարեցրած է ելէքտրականութեան արտայայտման համար. Շատ կարելի է համարելում, որ այդ գործարանը նախկին ժամանակներում շատերն են ունեցել (եթէ ոչ ամենքը), բայց ժամանակի ընթացքում անկայտ պատճառով չքացել է և մնացել է միայն երբեմն ախտաբանական երևոյթ, որ յատուկ է միայն անկանոն կերպով գործացած ջղային սիստեմ ունեցող մարդկանց. Երանով միայն կարելի է բացատրել այն երեւոյթը, որ ելէքտրական այժ արտայայտում են գլխաւորապէս կանայք, որոնց ջղային սիստեմն ընդհանրապէս աւելի է զարգացած, քան տղամարդկանցը. Գոնել մարդկանց մէջ ելէքտրականութեան գործարանը—դա է կազմում մեր ժամանակի մարդաբանական գիտութեան խնդիրը.

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի.—Հրատարակուած են կանոնները տոմսակների մասին՝ երկաթուղիներով ուղևորուելու և ապրանքներ տեղափոխելու համար այս տարուայ դեկտեմբերի 1-ից,

Նոյեմբերի 25-ին բացւում է ռուսաց երկաթուղիների ներկայացուցիչների ընդհանուր համաժողովը. Քննութեան են պատմանգրերի 28 խնդիրները.

Ամերիկական սինդիկատի ձեռքով Ռուսիայում մեքենաներ շինող երկաթագործարան հիմնելու խնդիրը վերջնականապէս քննւում է Փինանսների, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրու թիւնների և պետական վերահսկիչ խորհրդի մէջ.

Ծրագիրը է կազմւում երկաթուղի անցկացնելու Եկատերինինսկի երկաթուղու Պրոսեռնայա կայարանից մինչև Բերդեանսկ.

ԼՈՆԴՈՆ.—Ճապոնական մամուլի ասելով Ճապոնիան մտադիր է իւր առաջարկած ծանր պայմանների վրայ պնդել. Ասում են, որ պատերազմը շարունակուելու դէպքում Ճապոնիայի հոդերին կըմիացնուի մի ընդարձակ հող, միւս կողմից կարծում են, որ եթէ պատերազմը դադարի այժմ, այն ժամանակ Ճապոնիան կըբաւականանայ իրրև պատերազմի ծախք 400 մի լիոն իեն պահանջելով, և այն բանով, որ Չինաստանը իրեն տայ իւր զօրքերի բռնած հողերը.

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### Երկաթուղու գնացքները

Թիֆլիսից Բաքում գնում է

Մարդատար գնացքը առաւօտեան 9 ժամ 30 րոպէին, իսկ Բաթում հասնում է երեկոյեան 9 ժամ 45 րոպէին. Պոստային գնացքն երեկոյեան 6 ժամ 50 րոպէին. Բաթում հասնում է 8 ժ. 15 րոպէին.

Բաքումից Թիֆլիս գալիս է

Մարդատար գնացքն առաւօտեան 9 ժ. 40 րոպէին. Թիֆլիս հասնում է երեկոյեան 9 ժ. 55 րոպէին. Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 20 րոպէին, Թիֆլիս հասնում է ցերեկը 12 ժամ 25 րոպէին.

Թիֆլիսից Բաղու գնում է

Պոստային գնացքը ցերեկը 1 ժամ 10 րոպէին, Բաղու հասնում է առաւօտեան 7 ժամ. 30 ր.

Բաղուից Թիֆլիս գալիս է

Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 5 րոպէին. Թիֆլիս գալիս է երեկոյեան 5 ժ. 50 րոպէին.

Թիֆլիսից Կանձակ գնում է

ապրանքակից-մարդատար գնացքը երեկոյեան 7 ժամ. 27 րոպէին, անձակ հասնում է առաւօտեան 7 ժ 4 ր.

Կանձակից Թիֆլիս գալիս է

պրանքակից-մարդատար գնացքն երեկոյեան 6 ժամին, Թիֆլիս գալիս է առաւօտեան 7 ժամ 35 րոպէին.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


„ԹԱՏՐՈՆ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ

ՀԱՆԴԷՍ

(Երկրորդ տարի)

ԲԱՑՈՒՄԱԾ Է 1895 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Տարեկան բաժանորդագինն է Թիֆլիսում 3 ս. օտարաքաղաքացիների համար 3 ր. 30 կ. արտաքսման՝ 10 ֆրանկ.

Թիֆլիսում բաժանորդագր. ընդունւում է հրատարակչի մօտ Ատարօ ինստիտուտի փողոց, եղբ. Ութիճեանների տունը.

Օպերատորական դէպք է դէպի ԹԻՖԼԻՍԸ, АЛЕКСАНДРУ ТАРХАНЬЯНЪ, կամ Tiflis Alexandre Tarkhanian.

Հրատարակիչ՝ ԱՂԼԲ. ԹԱՐԽԱՆԵԱՆ

5—1

ՈՒՂՂ

Բուքովինայի (Աւստրիա) Սուչաւա քաղաքին մէջ ապրող լուսաւորչական հայոց գաղթականութեան և ս. եկեղեցւոյ հոգաւոր անձեր կը յայտարարեն, Թէ յոյժ մեծ կարիք ունին ուղիղ և աչալուրջ քահանայի կամ վարդապետի մը, որ լրացնէ իրենց հոգևոր պէտքերը. Քահանան կամ վարդապետը ըլլայ քաղաքակիրթ վարուեցողութեամբ, աստուածաբան, պարկեշտ և տեսքով. Պիտի իմանայ եւրոպական լեզուներէն որևէ մէկը, գլխաւորապէս գերմաներէնն, յամենայն դէպս—ֆրանսերէնն, որպէսզի կարենայ ըստ տեղւոյն հանգամանաց հայոց ներկայացուցիչ ըլլալ օտար ազգերու դիմաց. Այդպիսի քահանան կամ վարդապետը պիտի ստանայ Թոշակ մը՝ տարեկան 2000-էն մինչ 2,400 ֆրանք և բնակարան, ի բաց առեալ ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ հին սովորութեանց սահմանեալ եկամուտները. Յանկացողք պիտի դիմեն այս հասցէով. Warteres Garabet Ritter von Prunchul Armen. cultur Praesident Suezavu, Bucowina, Austria, միաեղ ղրկելով վկայականները, Թէ որտեղացի են և մը գործին աշակերտ եղած.

Սուչաւայի հայոց ազգային հոգաբարձութեան նախագահ՝ Ասպետ Վարդերես Կարապետեան փոխ Բուռնգուլ.

4—1

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Ա. ԿՈՊՊ Մ. Ալեքսէեւսկայա փողոց, 132

Մեծ քանակութեամբ ՆՈՐ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ 350-ից մինչև 550 րուբլի.

(314) 24—15.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՏԷՐ-ՑԱԿՈՒԵԱՆ

Ընդունում է երեւեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ աշակերտներ. Սոլոլակ, Դանովսկայա փողոց տուն № 11.

(658) 10—3.

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET EI

ՆԱՒԱԳՆՈՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղիղ և երեւելութիւն ՄԱՐՍԷՑԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԻԼ, երկու շաբաթը մի անգամ.

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները.

Բաթումից Պարսկ հաղորդակցութեան տոմսակները սովորական զիջումն ունի.

Բաթումից մեկնում է

Յորեքշաբթի 30 Նոյեմբերի 12 դեկ.) չորեքշաբթի «Սկիպիոն», կապիտան «Բոշէ», և այդպէս երկու շաբաթը մի անգամ չորեք. օրերը, ժամը 4-ին կէսօրուայ. Տեղեկութիւնները ստանալու համար Թող բարեհաճին դիմել հետեւեալ գործակալներին.

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՒՐՈՆՈՅԻՆ, Նաւթերեժնայա.

Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիոնի փողոց, քարվանսարայ ԴէորԲաղչի.

Բագուում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Հոլիւբեւսկայա հրապարակ, Նավթոպրոմիսլովոմ—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ.

(316) 20—2

ԿԵՆՏՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Պետերբուրգ Նեւսկի պր. № 3

Ռուսիայում ընդհրաւելնը Բարձրագոյն հոյլաուելն է սկսել 1889 թ. յունիսի 2-ին.

Ընկերութեան գործադրած վրայ կատարեալ ժամանակի իրական հսկողութիւն է նշանակած, ՈՒՐՐԵՆ ընկերութիւնը 1890 թուին Ֆրանսիայում և Եւրոպայի միւս պետութիւնների մէջ 50,000,000 ֆրանկի ապահովութիւն է արել.

ՈՒՐԲԱՆ (URBAIN)

Օգուտին մասնակցելու փոխարէն «Ուրբեն» ընկերութիւնը ոչ մի ընթացիկ պրեմիա չէ վերցնում կեանքըն ապահովուողի հիւանդութեան դէպքում և, որ չնայելով նրան Պոլիսը պահում է իւր այժը.

Գլխաւոր ներկայացուցիչ, Անդրկովկասի, Անդրկասպեան և Թուրքիստանի երկրների հարկի և Բուխարայի համար է Պալակ և Ընկ. առևտրական տունը Թիֆլիսում, Վերիամինսկայա փողոց տուն № 10, III դիմացիների հանդէպ. Գլխաւոր վերատեսչ ՄԻԽԱՑԼ ՕՍԻՊՈՎԻՉ ՉՆԺԻԿԸ. Կահկարգութիւնը և զանազան բոցատարութիւններ կարելի է ստանալ Բաթումում, Բագուում, Սամարղանդում—Պալակ և ընկ.ի գրասենեակներում և ընկերութեան բոլոր գործակալութիւններից.

30—10.

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 1. | «Սօս և Վարդիթեր» վէպ (երկրորդ տիպ) | 1 | 50 |
| 2. | «Ազատ» Թատերազրութիւն (սպառուած) | — | — |
| 3. | Երկու խօսք համքարի մասին» Թարգմ. (սպառուած) | — | — |
| 4. | «Ներքին կեանք Հին Հայաստանի» Թարգ. (սպառուած) | — | — |
| 5. | Ղարաբաղի տէրամայր Մարիամեան աղջկանց դպրոցի բացումը (սպառուած) | — | — |
| 6. | Աղուէսաց երկու դպրոցի բացումը (սպառուած) | — | — |
| 7. | «Կռուաճապղիկ» վէպ (սպառուած) | — | — |
| 8. | «Հայի խնդիրը (սակաւաթիւ) | 1 | |
| 9. | «Շահէն» վէպ | 1 | |
| 10. | «Յեցեր» վէպ | 1 | |
| 11. | «Բղդէ» պէպ | 1 | 20 |
| 12. | «Սկիզբն երկանց» վէպ | 1 | 20 |
| 13. | Յուշիկներ» Ա. շրջան | 1 | |

Բոլոր իմ աշխատութիւններս բացի «Սօս և Վարդիթերից վաճառւում են բացառապէս իմ մօտ:

Հասցէս՝ Թիֆլիս Ներսիսեան դպրանոց:

Գումարով առնողներին 20% զիջումն կըլինի:

Ձանազարհածախքն առնողի վրայ:

ՊԵՐՃ ՊՈՇՇԵԱՆՑ

30—13

Дозволено цензурою. Тифлисъ 23-го Ноября 1894

Տպարան Ա. Ի. Պետրովի

ТипографіяА. И. Петрова Гол. пр. домъ Читахова